

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Դ .

Նախաբան Կիւմիս Խմորիւ :

ՆԱԿԵՐԵՂԻՆ Տիւթը հանելէն ետքը երբոր ետեւի գործողութիւնները յաջորդաբար ու շուտ շուտ չընես, կը սկսի այլայլիլ ու խմորիլ :

Հասուն բանջարին Տիւթը դիմա-հար կ'ըլլայ, գոյնը ճերմակ՝ դեղին կամ վարդագոյն . աս ջուրը թէ որ քիչ մը ատեն բայը դնես, մանուշակի գոյն կ'առնէ ու ետքը սեւի կը զարնէ : — Սմանք կարծեցին թէ Տիւթին ասանկ գոյնը փոխելուն պատճառը՝ ճզմելու ատեն երկաթ գործածելն է . բայց անանկ չէ . վասն զի Տիւթը նոյն այլայլութիւնը կը կրէ՝ նաեւ ապակիէ սանդի մէջ ծեծելով :

Շաքարին Տիւթը թէ որ երկայն ատեն բացը դնես, կամաց կամաց կը թանձրանայ ու ինչուան հակըթի ճերմրկուցին պէս՝ երբեմն ալ աւելի թանձր խժային Տիւթ մը կը դառնայ . ու թէ որ գաւազան մը մէջը խոթես ու հանես, Տիւթը անոր վրայ կը կպչի ու թել թել կը կախուի : Որչափ որ խժային ըլլայ Տիւթը, քսել է թէ այնչափ աւելի առատ շաքար կայ մէջը :

Նախաբան շաքար հանողը պիտի ջանայ որ Տիւթը խժային ու թանձր ըլլայ . ապա թէ ոչ, շաքարը չբերեղանար ու մաքուր ըլլար : Եւ բանիս համար՝ մէյմը ջանալու է որ գործողութիւնները շուտ շուտ ըլլան՝ որչափ որ կարելի է առանց ուշացնելու . մէյմըն ալ գործարանին մէջի բոլոր անօթները միշտ լուալու ու մաքուր պահելու է . չգործածուած անօթներուն երեսն ալ թեթեւ կերպով մը կիր քսելու ու այնպէս թողլու է որ

չորնայ, և հարկ եղած ատենը քիչ մը ջրով ցողուելու և այնպէս գործածելու է . նմանապէս գործածուած լաթերն ու կտաւները մաքուր պիտի ըլլան :

Տիւթին խմորմանը դէմն առնելու հնարքներէն մէկն ալ շատ կաթ սայ մէկտեղ գործածելն է :

Տիւթի գործածած փայտերէն մէկ բանին :

Եւթին¹ : Եւթ ծառը արհեստի մէջ խիստ շատ գործածականներէն է . բարձր լեռներու վրայ ու Եւրոպայի հիւսիսային կողմը կը բուսնի . բարձրութիւնը երբեմն ինչուան հարիւր ոտք կը հասնի : Որնայ դաշտերու մէջ ալ առաջ գալ, մանաւանդ կաւոտ տեղուանք, բայց աւելի դժուար է : Սովորաբար աշնան վերջերը կը կտրեն աս ծառը՝ երբոր կ'ուզեն իրեն փայտէն տախտակ, գերան, և ուրիշ բաներ շինել, որոնք շինելու համար շատ պինդ պիտի չըլլայ, և օդուն մէջ շատ պիտի չկենայ : Իսկ երբոր կ'ուզեն օդու մէջ թողուլ, ան ատեն պէտք է կտրել՝ երբոր կը սկսի առատ խէժ վազցնել, որ ան ատեն երկայն կը դիմանայ : Եւթ փայտը ան ատեն շատ յարգի ու օգտակար կ'ըլլայ՝ երբ որ թեթեւութեանը հետ մէկտեղ պնդութիւն ալ ունենայ, որ արհեստաւորները շատ կը փնտռեն . ասկէ կը շինեն գերաններ, սիւնակներ, սեղանատախտակներ, նաւակներ, ու թելինուագարաններու տակի ամանը, վասն զի ձայն հանելու աւելի յարմար կուգայ :

Եւթիկայ² : Եւթիկայ գեղեցիկ ծառ մըն է, փայտը կարծր ու խիտ, գոյնը մութ կարմիր . Եւթիկայի, Եւթիկայի ու Եւթիկայի տաք երկիրները կը բուսնի ու շատ կը բարձրանայ . ասկէ կը շինեն սեղանատախտակներ,

¹ Եւթին . Իտ . Abete.

² Իտ . Mogano. Գ.Պ. Acajou. ՏՃ . Եւթիկայի :